ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ3

<<ՇՄՍԳ - ՀՄԱԱՇՁԲ -1 >>ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

23.06.2017թ. ժամը 12.00-ին ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքապետարանում կայացած ՇՄՍԳ - ՀՄԱԱՇՁԲ -1 ծածկագրով Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի տանիքի *նորոգման աշխատանքների համար գնման* ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սնակ Մաղաքյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մանյա Մովսիսյանը, Գևորգ Աճեմյանը
Քարտուղար՝ Դերենիկ Վարդանյանը

1.Լսեցին- Գնման հայտերի բացման մասին
/զեկուցող՝ Ս.Մաղաքյան/

1.Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 7746390/յոթ միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր իննսուն / ՀՀ դրամ :

1.1Հանձնաժողովի նախագահը ներկայացնում է << ՇՄՍԳ -ՀՄԱԱՇՁԲ-1>>ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացված հայտերը՝

| հ/հ | Անվանումը | հասցեն |
|---|---|---|
| 1. | <<ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ | ք.Երևան, Վարդանանց 8 |
| 2. | <<Ա.Վ.Ա.Շին>> ՍՊԸ | ք.Մարալիկ, Թումանյան 33 |

Հանձնաժողովը գնահատում է `

**2. Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին**

2.1 << ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարի կազմման, ներկայացման աշխատանքները կատարվել են հրավերի պահանջներին համապատասխան:
2.2<< Ա.Վ.Ա.Շին >> ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարի կազմման, ներկայացման աշխատանքները կատարվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**3. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

3.1 << ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ-ի հայտ պարունակող բացված ծրարում առկա են պահանջված փաստաթղթերը
3.2<< Ա.Վ.Ա.Շին >> ՍՊԸ-ի հայտ պարունակող բացված ծրարում առկա են պահանջված փաստաթղթերը

**4.Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1<< ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի վճարման պահանջագրում գնման ընթացակարգի ծածակագիրը թերի է լրացված և չի համապատասխանում հրավերով սահմանված <<Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգին>>

4.2<< Ա.Վ.Ա.Շին >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում `

ա/ վճարման պահանջագրում լրացված չէ << արժույթը (բառերով և կոդով)>> տողը ,ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված <<Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգին>>

բ/Տուժանքի մասին համաձայնագրում մասնակցի կողմից լրացված չէ ամիս, ամսաթիվը և տարեթիվը, ինչը չի համապատասխանում սույն հրավերով սահմանված կարգին

5. Նախագահողը հայտարարում է մասնակիցների գնային առաջարկները մեկ թվով արտահայտված`

| Չափաբաժնի համարը | Աշխատանքի Անվանումը | Չափման միավորը | Գնի առաջարկ/ՀՀ դր./ | |
|---|---|---|---|---|
| | | | << ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ | << Ա.Վ.Ա.Շին >> ՍՊԸ |
| 1. | Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի տանիքի *նորոգման աշխապանքներ* | | 7110000/յոթ միլիոն մեկ հարյուր տաս հազար/ | 6002004/վեց միլիոն երկու հազար չորս/ |

6. Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի և 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի դրույթները,

հանձնաժողովը որոշում է /թիվ 3/

1.<< ԱՐԳՈՀՇԻՆ >> ՍՊԸ-ի և << Ա.Վ.Ա.Շին >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար՝ որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտեր և մերժել

2. <<ՇՄՍԳ - ՀՄԱԱՇՁԲ -1 >> ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ`3 դեմ` 0

Հանձնաժողովի նախագահ` Ս.Մաղաթյան

Անդամներ` Մ.Մովսիսյան

Գ.Աճեմյան

Քարտուղար` Դ.Վարդանյան